
ԲԱՌԱԲԱՐԴՄԱՆ ԵՎ ԲԱՌԱԾԱՆՑՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ (տիպաբանական քննություն)

ՀԱՍՏԻԿ ՍԱՄՍՈՆՅԱՆ

Վերջին ժամանակներս լեզվաբանական տիպաբանության նկատմամբ հետաքրքրությունը բավականին մեծացել է: Նախքան աշխարհի լեզուների համընդիանուր տիպաբանական բնութագրումանն անցնելը պետք է ունենալ այդ լեզուներից յուրաքանչյուրի ամբողջական նկարագիրը: Այդ առումով էլ առաջանում է նաև ժամանակակից հայոց լեզվի տիպաբանական քննության անհրաժեշտություն: Յայ լեզվաբանության մեջ առաջին անգամ դասական գրաբարը իր բոլոր մակարդակներով տիպաբանական բնութագրման է ենթարկել (հնչույթային, ձևաբանական, շարահյուսական) Ա. Սարգսյանը¹:

Լեզուների ձևաբանական կառուցվածքի տիպաբանական քննությունը կարելի է կատարել քանակական մի շարք մեթոդների օգնությամբ: Ա. Սարգսյանը դիմել է Զ. Գրինբերգի առաջարկած մեթոդին, քանի որ այդ մեթոդը արդյունավետ է լեզվական փաստերի ճշգրիտ ներկայացման տեսակետից:

Մեթոդը հնարավորություն է տալիս ի հայտ բերելու ամենատարբեր տիպի լեզուների կառուցվածքային (կցման, թերման, բառաբարուման, բառափոխության և այլն) բազմաթիվ ընդհանուր գծեր ոչ թե պատահականորեն, այլ նախապես ընտրված մի շարք էական հատկանիշների հիման վրա: Մեթոդը կոչվում է քանակական, թեև դա ամենահիմնական էլ չի նշանակում, թե որակն այդտեղ անտեսվում է: ամեն մի քանակական վերլուծության նպատակն է որակի բացահայտումը:

Զ. Գրինբերգի մեթոդը, որ հիմնված է Է. Սեպիրի հասկացական դասակարգման վրա բաղկացած է տասը ցուցիչներից՝ 1. M/W – համադրականություն, 2. A/J – կցականություն, 3. R/W – բառաբարդում, 4. D/W – բառածանցում, 5. I/W – գերակշռող բառափոխություն (թերում), 6. P/W – նախածանցում, 7. J/W – վերջածանցում, 8. O/N – անջատականություն, 9. I/N – մաքուր բառափոխություն, 10. C/N – համաձայնություն²:

Ժամանակակից հայերենի կցականության ցուցիչի որոշմանը անդրադարձել ենք մեր մեկ այլ հոդվածում³: Սույն հոդվածի նպատակն է պարզել ժամանակակից հայերենի նախածանցման և վերջածանցման ցուցիչները՝ Զ. Գրինբերգի մեթոդի և դասակարգման համաձայն:

¹ Տե՛ս Ա. Ե. Սարգսյան, Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը / Յայոց լեզվի կառուցվածքը, Եր., 1975, էջ 324:

² Տե՛ս Գրինբերգ Ջ. Կвантитативный подход к морфологической типологии языка // Новое в лингвистике. Выпук III. М., 1963, էջ 74:

³ Տե՛ս Յ. Սամսոնյան, ժամանակակից հայերենի կցականության ցուցիչը // Յանրապետական գիտական նատաշրջանի նյութեր (4-5 դեկտ., 2008 թ.), Գյումրի, 2009:

Ժամանակակից հայերենի բառապաշտի հարստացման կարևորագույն աղբյուրը սեփական միջոցներով նոր բառերի ստեղծումն է: Այս նպատակի համար հայոց լեզուն կիրառում է երկու եղանակ՝ ածանցում և բարդացում, որոնցով կազմվում են բարդ և ածանցավոր բառեր, որոնք հայերենի բառապաշտում մեծանասնություն են: Ուստի հայերենի տիպաբանական բնութագրման համար, ի թիվս այլ չափանիշների, կարևոր է պարզել նաև բառաբարդման և ածանցման ցուցիչներն ըստ նշված մեթոդի: Նշենք, որ Զ. Գրինբերգի վերցրած ընտրանքի ծավալը (յուրաքանչյուր լեզվի համար ընդամենը 100 բառանոց տեքստ)⁴ համարելով անբավարար՝ վերլուծության ժամանակ առավելագույն ճշգրտություն ապահովելու համար հաշվի ենք առել ընտրանքի ծավալի և թույլատրելի հարաբերական սխալի մեծության հարաբերակցությունը: Սույն հոդվածի մեջ, փորձելով որոշել ժամանակակից հայերենի բառաբարդման և բառածանցման ցուցիչները, վերցրել ենք 1010 բառանոց տեքստ, քանի որ ինչքան ընտրանքի ծավալը մեծ է, թույլատրելի հարաբերական սխալը փոքր է:

Զ. Գրինբերգի մեթոդի երրորդ ցուցիչը Սեպիրի դասակարգման սխեմայի մեջ առանցքային կետ է դերիվացիոն (բառակազմական կամ ածանցական) և կոնկրետ հարաբերական հասկացությունների առկայություն/բացակայությունը: Յանօվելով, որ հասկացությունների դասակարգման վրա հիմնված սեպիրյան մեկնակետով հնարավոր չէ գիտական անհրաժեշտ ճշտության հասնել, Զ. Գրինբերգը ձևույթները դասակարգում է երեք խմբի՝ արմատական, ածանցական (բառակազմական) և բառափոխական⁵:

$$\text{Առաջին խմբի ցուցիչը՝ } \frac{R}{W}, \text{ բառաբարդման ցուցիչն է, որտեղ } R-\text{ն}$$

արմատական ձևույթների թիվն է, իսկ W -ը՝ բառերի⁶: Ըստ այդ ցուցիչի՝ կարող են լինել երեք տիպի լեզուներ՝ 1. բառաբարդումից զուրկ լեզուներ (էսկիմոսներեն), 2. լեզուներ, որոնք մեծապես օգտվում են բառաբարդումից և 3. լեզուներ, որոնք միջին դիրք են գրավում:

Ինչպես գիտենք, բառերը կարելի է վերլուծել՝ բաժանել բաղադրիչների կամ կատարել ձևույթային վերլուծություն. օրինակ՝ տնտեսագիտություն բառը կարող ենք բաժանել տն(տուն)-տես-ա-գիտ(գետ)-ություն բաղադրիչների, բարձրահասակ բառը կարող ենք բաժանել բարձր-ա-հասակ բաղադրիչների, տերևից բառը՝ տերև-ից բաղադրիչների, լծակում բառը՝ լծ(լիծ)-ակ-ում: Բառերի վերածումը բաղադրիչների պարզուն է, թե ինչ միավորներից են կազմված բառերը: Եթե այդ բաղադրիչները վերցնենք առանձին-առանձին, օրինակ՝ տուն, բարձր, -ակ, -ություն և այլն, կպարզվի, որ դրանք բոլորն էլ որոշ իմաստ ունեն, իսկ այդ բաղադրիչներից որևէ հնչյուն հեռացնելու դեպքուն դրանք կամ կզուկվեն իմաստից, կամ էլ նիւրիշ իմաստ կստանան:

Բառի վերլուծությամբ ոչ միայն պարզվում է բաղադրիչների կազմը, այլև ստացվում են այնպիսի միավորներ, որոնք այլևս վերլուծելի չեն և տվյալ հնչյունակազմով ու տվյալ իմաստով լեզվական անբաժանելի միա-

⁴ Տե՛ս Գրինբերգ Ջ. նշվ. աշխ., էջ 80:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 77:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 76:

վորներ են, ձևի և իմաստի անխախտելի միասնություն կազմող նվազագույն միավորներ՝ ձևույթներ: Ձևույթներն ըստ իրենց իմաստային և գործառական առանձնահատկությունների ընդունված է բաժանել **հիմնականի** և **երկրորդականի**: Երկրորդական ձևույթները իրենց հերթին բաժանվում են բառակազմական և ձևակազմական տեսակների: Դրանք միմյանցից տարբերվում են թե՛ իրենց բնույթով, թե՛ բարի կազմում ունեցած դեղով:

Այն ձևույթները, որոնք արտահայտում են չտարբերակված բառային իմաստ, կոչվում են **հիմնական կամ արմատական ձևույթներ** (արմատներ):

Այն բոլոր երկրորդական ձևույթները, որոնք ծառայում են բառեր կազմելուն, կոչվում են **բառակազմական երկրորդական ձևույթներ** կամ **ածանցներ**: Բառակազմական երկրորդական ձևույթների արտահայտած իմաստը կոչվում է **ածանցական իմաստ**:

Քանի որ բառերի իմաստային հիմքն են կազմում հիմնական կամ արմատական ձևույթները, ապա պարզ երևում է, որ առանց հիմնական ձևույթների բառեր չեն լինում: Նշանակում է՝ հիմնական ձևույթը բառի անհրաժեշտ բաղադրիչն է կամ ինը ինքը՝ բառը: Յետևապես, բառերը կազմվում են կամ արմատներից՝ այլ ձևույթների հետ բաղադրվելով, կամ ել արմատները (հիմնական ձևույթները) ինքնին գործածվում են որպես բառ: Տարբերակում են նաև ինքնուրույն, անկախ գործածություն ունեցող (տուն, մարդ) և «կապված» արմատներ, որոնք առանձին չեն գործածվում: Այսպես՝ ապօրինաբար, անօրեն, օրենք, օրինակ բառերը կազմված են օրեն արմատից, գիտական, տգետ, գիտենալ բառերը՝ գետ (գիտ) արմատից, որոնք ժամանակակից հայերենում առանձին չեն հանդիպում:

Բառի ձևույթային կառուցվածքի վիճակագրական քննությամբ կարելի է պարզել բառի մեջ հիմնական և երկրորդական (ածանցական) ձևույթների քանակական բնութագրերը, այսինքն՝ սահմանել բառաբարդման և ածանցման ցուցիչները ըստ Գրինբերգի առաջարկած բանաձևների:

$$\text{Բառաբարդման ցուցիչը որոշվում է } \frac{R}{W} \text{ բանաձևով, որտեղ } R - \text{ ը տեքս-$$

տուն հանդիպող արմատների քանակն է, իսկ W - ն՝ բառերի:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գրաբարյան 100-բառանոց տեքստում յուրաքանչյուր բառի միջին հաշվով ընկնում է 1,06 արմատ⁷: Միևնույն արժեքն է ստացվել նաև 1500-բառանոց այլ տեքստերի վիճակագրական քննությունից⁸: Ժամանակակից հայերենի բառաբարդման և ածանցման ցուցիչները որոշելու համար օգտվել ենք Մ. Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության աշխարհաբար թարգմանությունից⁹:

1010 բառանոց տեքստին միջին հաշվով բաժին է ընկնում 1110 ար-

$$\text{մատական (հիմնական) ձևույթ, այսինքն՝ } \frac{R_{(\text{արմատական ձևույթ})}}{W_{\text{բառ}}} \frac{1110}{1010} = 1,1 :$$

Ժամանակակից հայերենի բառաբարդման ցուցիչը հավասար է 1,1-ի: Թվում է՝ հայերենի բառաբարդման ցուցիչը շատ ավելի բարձր արժեքներ

⁷ Տե՛ս Ա. Ե. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 324:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 325:

⁹ Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 301:

պետք է ումենար, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ յուրաքանչյուր տեքստում որոշակի տոկոս են կազմում շաղկապները, կապերը, առանձին գրվող օժանդակ բայերը, որոնք լինելով մենաձևույթ՝ մենարմատ, ազդում են ընդհանուր տոկոսային հարաբերության վրա: Այնուամենայնիվ, գրաքարի համեմատությամբ ժամանակակից հայերենի բառաբարդնան ցուցիչը փոքր-ինչ ավելի մեծ է, որ բացատրվում է նրա առավելապես կցական բնույթով և համադրական բարդությունների ավելի մեծ տարածմանը (հմտ:՝ պատասխան տալ – պատասխանել և այլն):

Համեմատության համար ներկայացնենք գրաքարից վերցված տեքստերի բառաբարդնան ցուցիչի ընդհանուր պատկերը Ա. Սարգսյանի ուսումնասիրության մեջ¹⁰: Բառաբարդնան ցուցիչի հաշվարկը տրվում է ստորև:

Աղյուսակ 1

Հեղինակ	Բառերի թիվը	Բառաբարդնան ցուցիչը
Ազաթանգեղոս	488	1,06
Կորյուն	672	1,09
Եղի երգոց	197	1,04
Գործք Առաքելոց	559	1,08
Միջին արժեքը	500	1,07

Երկրորդը բառածանցման (դերիվացիոն) ցուցիչն է, որը որոշվում է

հետևյալ բանաձևով¹¹: $\frac{D_{(\text{ածանց})}}{W_{(\text{բառ})}}$:

Վերջինիս բարձր արժեքների դեպքում տվյալ լեզուն պատկանում է բարդ կամ դերիվացիոն խմբին: Ժամանակակից հայերենի ածանցման ցուցիչը որոշվել է ըստ Մ. Խորենացու աշխատությունից վերցված վերոնշյալ հատվածի: Հաշվարկները ցույց են տվել, որ 1010 բառից բաղկացած հատվածին միջին հաշվով ընկնում է 225 ածանց: Հետևապես, ըստ հաշվումների՝ ժամանակակից հայերենի բառածանցման (դերիվացիոն) ցուցիչը հավա-

սար է 0,22-ի ($\frac{D_{(\text{ածանց})}}{W_{(\text{բառ})}} = \frac{225}{1010}$):

Բացի ածանցման ընդհանուր ցուցիչից, Զ. Գրինբերգն առանձնացնում է նաև նախածանցման և վերջածանցման ցուցիչները:

Ածանցները կարող են բաղադրական իիմքին միանալ սկզբից՝ տարադարձամ, աճ-բիծ, լիովս-ըմբռնում, կամ վերջից՝ խնձոր-ենի, գիտ(գետ)-ուրուում, թև-ավոր և այլն:

Յիմքի սկզբից դրվող ածանցները նախածանցներ են, վերջից միացողները՝ վերջածանցներ: Ժամանակակից հայերենի վերջածանցների մեջ մասը սկսվում է ծայնավորով, որով վերանում է հիմքը և ածանցը իրար միացնող հոդակապի անհրաժեշտությունը, ինչպես՝ լճ-ակ, վարձ-ուլք, ցող-ուլմ, վայել-ուլչ, արձակ-ուրդ, ջերմ-որեն, թար-ուստ, լեռն-ային, հերոս-ություն և այլն: Պետք է նաև նշել, որ ժամանակակից հայերենին ածանց-

¹⁰Տե՛ս Ա. Ե. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 322:

¹¹Տե՛ս Գրինբերգ Ջ. նշվ. աշխ., էջ 75.

ների մեջ կուտակումներ հատուկ չեն: Առավել ևս խորթ են կուտակումները միանգամից արմատի ծախս և աջ կողմերում: Դայոց լեզվին հատուկ է ածանցների համաշափ տեղաբաշխում, որը պայմանավորված է հաղորդակցումը հեշտացնելու ձգտումով: Նախածանցների և վերջածանցների շափից ավելի մեծ կուտակումները առաջին հերթին դժվարացնում են ընկալողի գործը:

Ժամանակակից հայերենի ածանցման ամենատարածված բառատիպերը կարելի է ներկայացնել հետևյալ կաղապարներով՝ **Ա + ա** (արմատ + վերջածանց) և **ա + Ա** (նախածանց + արմատ): Դայտնի է, որ հայերենի նախածանցները, վերջածանցների համեմատությամբ, ավելի փոքրաթիվ են:

Դարձ է նաև նշել, որ, ի տարբերություն գրաբարի դասական շրջանի, արդի հայերենը ավելի հարուստ է նախածանցավոր կազմություններով:

Ըստ Զ. Գրինբերգի՝ նախածանցման ցուցիչը որոշվում է հետևյալ բա-

$$\text{նաձնով} \left(\frac{P_{(\text{նախածանց})}}{W_{(\text{բառ})}} \right), \text{ որն արտահայտում է նախածանցների թվի հարա-$$

$$\text{բերությունը բառերի թվին, իսկ վերջածանցման ցուցիչը} \left(\frac{S_{(\text{վերջածանց})}}{W_{(\text{բառ})}} \right)$$

բանաձևով, որն արտահայտում է վերջածանցների թվի հարաբերությունը բառերի թվին:

Ժամանակակից հայերենի նախածանցման և վերջածանցման ցուցիչները որոշելու համար դարձյալ օգտվել ենք Մ. Խորենացու «Դայոց պատմությունից»: Գրքի վերոհիշյալ հատվածում 225 ածանցներից 200-ը վերջածանցներ են, 25-ը՝ նախածանցներ:

Նախածանցման ցուցիչը ժամանակակից հայերենում հավասար է 0,02-ի, իսկ վերջածանցման ցուցիչը՝ 0,20-ի` (տե՛ս այսուսակ 2):

Այլուսակ 2

	Բառաբարուման	Նախածանցման	Վերջածանցման
Գրաբար	1,06	0,01	0,13
Ժամանակակից հայերեն	1,10	0,02	0,20

Դժվար չեն նկատել, որ ժամանակակից հայերենի բառաբարուման, նախածանցման և վերջածանցման ցուցիչները ժամանակի ընթացքում շատ քիչ են փոփոխվել: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ բառակազմության տեսակետից հայոց լեզուն բավականաշափ կայուն է և պատճեկան զարգացման ընթացքում պահպանել է իին շրջանից եկող բառակազմական կաղապարները¹²:

¹² Լ. Ս. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 362:

АСМИК САМСОНЯН – Индексы словосложения и деревации в современном армянском языке (Типологическое исследование). – Если не считать классификацию языков по географическому признаку, то для распределения их по группам ранее других использовался типологический критерий. В современной типологии широко применяются квантитативные методы лингвистического исследования. Это направление представлено трудами Дж. Гринберга, где находит числовое выражение несколько видоизмененная классификация Э. Сапира. Однако, в отличие от Э. Сапира и многих его предшественников, Дж. Гринберг сравнивает не языки в целом, а их отдельные категории, которые и снабжаются числовыми индексами. В статье методом количественного анализа Дж. Гринберга определены индексы словосложения и деривации (в т. ч. префиксации и суффиксации) в современном армянском языке, которые сопоставлены с древнеармянскими параллелями. Установлено, что по сравнению с древнеармянским в современном языке индексы словосложения и деривации несколько выше, хотя расхождение невелико, что объясняется устойчивостью словообразовательных моделей армянского языка по ходу его исторического развития.

HASMIK SAMSONYAN – Word composition and derivation markers in modern Armenian (a typological survey). – When not considering the geographic distribution of languages, typological analysis is considered one of the most ancient ways of language classification. Modern typology makes an extensive use of quantitative methods of linguistic analysis. This tendency in typological research papers is supported by works by J. Greenberg, who modified Sapir's classification to discover quantitative evaluation. Unlike E. Sapir and several of his predecessors, J. Greenberg compares not languages but their separate categories that are supplied by numerical markers.

Based on the method of quantitative analysis by J. Greenberg, the present paper defines word composition and derivation markers in modern Armenian and makes parallels with those in Old Armenian. It has been revealed that as compared to Old Armenian, in modern Armenian, word composition and derivation markers are relatively higher, though with slight divergence. This fact is accounted for by persistence of word composition models in the Armenian language over its historical development.